



ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐԷ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԴԱՎԻԹ Ե-Ը ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց կաթողիկոս **Տ. Տ. Վազգեն Ա-**ի եղբայրական հրավերով սույն թվականի **սեպտեմբերի 29-ին** Մայր Աթոռ ժամանեց Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Նորին Սրբություն **Տ. Դավիթ Ե-ը**։

Վրաց ուղղափառ և բույր եկեղեցու նորընտիր Հովվապետի սույն այցելությունը Մայր Աթոռ զուգադիպում էր Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 17-րդ տարեդարձին։

Նորին Սրբություն Դավիթ Ե կաթողիկոսին ողնկցում էին Սուխումիի և Աբխազիայի **Իլիա միտրոպոլիտը**, Թեթրիծղարոյի միտրոպոլիտ և Թբիլիսիի Ալեքսանդր Նևսկի տաճարի ավագներեց **Զինովի արքեպիսկոպոսը** և Յիկա-նիի **Գայոս եպիսկոպոսը**։

Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոսին, հանուն Հայոց Հայրապետի, Թբիլիսիից ողնկցում էին նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ **տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը**, վրահայոց թեմի առաջնորդական տեղապահ **տ. Գևորգ վրդ. Սերապետյանը** և թեմական խորհրդի անդամները՝ գլխավորությամբ ատենապետ **Սուրեն Ավչյանի**։

Սեպտեմբերի 29-ին, ժամը 15-ին, Երևանի օդանավակայանում բարձրաստիճան հյուրերին դիմավորեց և բարի գալուստ մաղթեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբան եպիսկոպոսներով, վարդապետներով և մայրավանքի ղեկավար պաշտոններությամբ։

Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Նորին Սրբություն Դավիթ Ե-ին Երևանի օդանավակայանում դիմավորեց և բարի գալուստ մաղթեց ՀՍՄՀ Միմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ մեծահարգ տիար **Սարգիս Գասպարյանը**։

Հարգարժան հյուրերը օդանավակայանից մեքենաների շարաշարով հանդիսավորապես առաջնորդվեցին Մայր Աթոռ։

Եկեղեցական թափոռով ու «Հրաշափառ»-ով երկու Հայրապետները առաջնորդվում են Մայր տաճար, ուր իջման սուրբ սեղանի առաջ ծնրադիր կատարում են Իրենց ոխան ու աղոթքը երկյուղած բարեպաշտությամբ։

Եկեղեցական կարճ արարողությունից հետո Հայոց Հայրապետը ջերմ-

րեն ողջունում է Համայն Վրաստանի Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսին ու Նրա շքախմբի անդամներին՝ արտահայտելով անձամբ իր, Մայր Աթոռ և Էջմիածնի և հավատացյալ հայ ժողովրդի ուրախությունը այս պատմական այցելության առիթով և բարեմաղթում, որ Աստված օրհնի այս բացառիկ առիթը որպես սիրո և հարգանքի նշան երկու քույր եկեղեցիների եղբայրության համագործակցության:

Ողջույնի փոխադարձ ջերմ խոսքով հանդես է գալիս Նորին Սրբություն Դավիթ Ե-ը՝ արտագին շնորհակալություն հայտնելով եղբայրական սրտաբաց ընդունելության համար և հաղորդելով վրաց եկեղեցու սուրբ Սիմոնի, հոգևորականության և բարեպաշտ ու աշխատասեր վրաց եղբայրական ժողովրդի ողջույններն ու սիրո զգացմունքները:

Մայր տաճարում եկեղեցական արարողության ավարտին երկու Հայրապետները առաջնորդվեցին Վեհարան, ուր ի պատիվ հարգարժան հյուրերի տրվեց ճաշկերույթ:

Փոքր հանգստից հետո մույն օրը, երեկոյան, հարգարժան հյուրերը դիտեցին Երևանի տեսարժան վայրերը և այցելեցին Նոյեմբերի հուշարձան Ծիծեռնակաբերդում, ուր ծաղիկներ դրեցին և «Հոգեց» արտասանեցին ու աղոթեցին հայ նահատակների հիշատակին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 30-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, բարձրապատիվ հյուրերը Երևանում այցելեցին և Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ուր նրանց ջերմորեն ընդունեց Մատենադարանի ղեկավարությունը: Հյուրերն այստեղ մեծ հիացմունքով ծանոթացան հայ մշակույթի և արվեստի անկրկնելի գանձերին, ինչպես նաև գոհունակության և երախտագիտության խոր զգացմունքով դիտեցին Մատենադարանում գուրգուրանքով պահված վրացական մշակույթին և պատմությանը վերաբերող թանկագին հիշատակարանները:

Ժամը 12-ին հյուրերը ժամանեցին Մայր Աթոռ՝ ճանապարհին այցելելով հայ ճարտարապետության հնագույն կոթող հանդիսացող և Հոփսիմե տաճար:

Այնուհետև հյուրերը Նոր Վեհարանում դիտեցին հայ եկեղեցական արվեստի նորաբաց պատկերասրահը, եղան Հին Վեհարանի կաթողիկոսաց թանգարանում, այցելեցին Մայր տաճար, ուր ծանոթացան տաճարի թանգարանում պահվող եկեղեցական արվեստի մուշտներին:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ ԵՎ ԱՅՑ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆ

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, երկու Հայրապետները եկեղեցական թափոքով և հանդիսավոր շքերթով մուտք գործեցին Մայր տաճար և նախագահեցին երեկոյան ժամերգությանը և ապա միատեղ աղոթեցին աշխարհի խաղաղության, ժողովուրդների եղբայրության և Էկումենիկ ոգով եկեղեցիների ի Քրիստոս սիրո միության և համագործակցության համար:

Ժամը 19-ին երկու Հովվապետները Իրենց շքախմբերով ներկա եղան հոգևոր ճեմարանի հանդիսասրահում հյուրերի պատվին կազմակերպված ուսանողական հանդեսին:

Հանդեսը բացվեց Հայոց Հայրապետի աղոթքով, որից հետո հոգևոր ճեմարանի տեսուչ **տ. Հովհաննես քհն. Մարությանը**, հանուն դասախոսական կազմի և ուսանողության, բարիգալստյան և ողջույնի հետևյալ խոսքն ուղղեց թանկագին հյուրերին.

«Վեհափառ Տեր,
Գերազնորի և հոգեշնորհի հայրեր,
Սիրելի սաներ և ներկաներ,

Հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության համար երջանկություն է նվիրական այս սուրբ հարկի տակ ողջունել և բարիգալստյան խոսք ասել Նորին Սրբություն **Տ. Դավիթ Ե** վրաց նորընտիր Պատրիարք-կաթողիկոսին և Նրա շքավմբի բարձրապատիվ անդամներին:

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունն ունի պատմական խոր հիմություն: Մենք հնում միասին ենք պայքարել բազում բռնակալությունների դեմ: Մեր ժողովուրդները պատվով են դուրս եկել այդ պայքարներից: Անցյալում հայ և վրաց եկեղեցիների հարաբերությունները եղել են եղբայրական:

Իսկ այսօր մեր երկրներում, սովետական կարգեր հաստատվելուց հետո, մեր երկու ժողովուրդների և եկեղեցիների եղբայրական հարաբերությունները ավելի են սերտացել և խորացել:

Մեր ժամանակաշրջանը էկոմենիկ շարժման և զարգացման մի ժամանակաշրջան է: Ինչպես հայ եկեղեցին, այնպես էլ վրաց եկեղեցին քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ միասին Քրիստոսի Ավետարանի լույսով առաջնորդված՝ Աստուծո գործի համար, ժողովուրդների տեսական եղբայրության, եկեղեցիների համագործակցության համար իրենց ջանքերը չեն խնայել:

Թույլ տվեք, հարգելի ներկաներ, հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության կողմից դարձյալ ողջունել մեր սիրելի և շատ հարգարժան հյուրերին:

Թող Աստված երկար ու երկար կյանք պարգևի նորընտիր **Դավիթ Ե** վրաց կաթողիկոսին, որպեսզի Նա Իր հոգևոր դասի հետ միասին Ավետարանի լույսով աղեցուն իր հավատացյալ ժողովրդին առաջնորդի աստվածային մաքրամաքուր կատարներ: Թող ավելի պայծառամա վրաց **ս. եկեղեցին**, նորընտիր **Դավիթ Ե** կաթողիկոսի օրով:

Թող միշտ անշարժ մնա վրաց **ս. եկեղեցին**:

Այնուհետև գործադրության դրվեց գեղարվեստական մի ծրագիր: Հոգևոր ճեմարանի սաները, **տ. Մասիս արդ. Գալստյանի** ղեկավարությամբ, կատարեցին «Էջ Միածինն ի Հօրէ», «Որք զարդարեցին», «Գովեն՝ Երուսաղէմ» շարականները, ինչպես նաև «Ազգ փառապանծ», «Հայրենիքիս հետ», «Գարուն Երևան» խմբերգերը: Գ դասարանի ուսանող **Թովմաս Պողոսյանը** վրացերեն լեզվով արտասանեց Իլիա Շավմախվաճեի «Լոցվա» («Աղոթք») բանաստեղծությունը: Ապա ելույթ ունեցավ ճեմարանի «Զվարթնոց» նվագախումբը:

Հանդեսի ավարտին տեսչի հրավերով ճեմարանի ուսանողությանն ուղղված օրհնության խոսքով հանդես եկավ Նորին Սրբություն **Դավիթ Ե** կաթողիկոսը, որն Իր գլխավորած պատվիրակության անունից շնորհակալություն հայտնեց իրենց պատվին կազմակերպված սույն գեղեցիկ հանդեսի համար՝ հուզմունքով հիշելով Իր ուսանողական տարիները վրաց հոգևոր ճեմարանում, ուր Նա պատրաստվել էր Իր ապագա հոգևոր ծառայության համար:

Իր խոսքի ավարտին Նորին Սրբությունը օրհնեց ճամարանում կատարվող կրթական, հոգևոր գործը՝ հաջողություն մաղթելով ուսանողության ուսման և հոգևոր զարգացման ասպարեզում:

Հանդեսն ավարտվեց «ի թիվ» արտասանված հայերեն և վրացերեն Տեղումական աղոթքով:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԵՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 1: Կիրակի:

Այսօր Հայոց Հայրապետի գահակալության 17-րդ տարեդարձն է: Անցել են աղոթքի, ստեղծագործ աշխատանքի, կառուցումների, հաջողությունների 17 բեղմնավոր տարիներ: Ուրախ է հայոց եկեղեցին, որ Լուսավորչի գահի վրա բազմել է մեր զոհաբերվող, հավատավոր և ազնվահոգի հովվապետներից մեկը, որն իր սուրբ և բարի ձեռքերում է պահում Ամենայն Հայոց Հայրապետության հոգևոր գերագույն ղեկավարությունը իր կոչման և պարտքի բարձր գիտակցությամբ:

«Ուրախ լեր, սուրբ եկեղեցի»:

Գահակալության 17-րդ տարեդարձի առիթով Մայր Աթոռ են ժամանել Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոսը՝ ի գլուխ իր պատվիրակության, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, բազում ուխտավորներ սփյուռքի զանազան թեմերից և ուխտավոր-հավատացյալների մի մեծ խումբ Հայաստանից և հարևան հանրապետություններից:

Առավոտյան Մայր տաճարը և վանքի շրջափակը լցվել են ուխտավորների հոծ բազմությամբ: Աջնամային պայծառ ու հրաշալի օր է:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը ամպհովանու տակ, Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե կաթողիկոսի ընկերակցությամբ, եկեղեցական թափոռով առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու իր գահակալության առիթով հայրապետական սուրբ պատարագ:

Մայր տաճարի ձախակողմյան դասում հայրապետական մասնավոր գահի վրա իր տեղն է գրավել Տ. Դավիթ Ե վրաց կաթողիկոսը՝ շրջապատված իր շքախմբի անդամներով:

Հանդիսավոր սուրբ պատարագին ներկա են նաև տ. Թորգոմ արքեպիսկոպոսը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևոր ճամարանի դասախոսները, մայրավանքի պաշտոնյաները և սփյուռքից ժամանած բազմաթիվ ուխտավորներ:

Պատարագի սրբազան արարողությունը շարունակվում է մինչև «Հայր մեր»: Այժմ հայրապետական քարոզի պահն է: Պատարագի Հայոց Հայրապետը «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո» բնաբանով խոսում է հետևյալ ոգեշունչ քարոզը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Ամեն տարի, երբ մոտենում է հոկտեմբեր ամիսը, Մեր շրթները այս մաղթանքն են կրկնում: Կարծում ենք, թե չկա ավելի գեղեցիկ և հարմար խոսք առ Աստված Մեր տկար անձի գահակալության տարեդարձի այս առիթով. «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»:



Ս. ՊԱՏՄԱՆԻԱՆԻՆ ԵՒ ՊԱՆ. ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Եվ եթե այս 17 տարիների ընթացքում իրապես բազում շինարարական աշխատանքներ կատարվեցին Մայր Աթոռից ներս թե նրանից դուրս, մեր ներքին թեմերում թե արտասահմանում, հոգևոր, բարոյական, կրթական և նյութական իմաստով, այդ բոլորը մախ և առաջ պարտական ենք աստվածային այդ օգնականության և առաջնորդության: Հետևաբար, շատ բնական է, որ Մեր առաջին խոսքը լինի երախտագիտության և օրհնության խոսք՝ ուղղյալ Աստուծո Ամենակալին, որը 17 տարիներ շարունակ հանդիսացավ Մեր առաջնորդող հոգևոր Գերագույն Ուժը, որն այսօր էլ շարունակում է հանդիսանալ որպես այդպիսին և որն անպայման գերագույն երաշխիքն է նաև մեր ապագա բոլոր իրագործումների և ծրագրերի հաջողության:

Մենք Մեր աշխատանքի արդյունքները պարտական ենք նաև մեր հավատացյալ ժողովրդին և մեր հավատավոր հոգևոր եղբայրներին, որոնք առաջին օրվանից իսկ Մեզ շրջապատեցին գուրգուրանքով, սիրով, վստահությամբ: Այդ վստահությունն ու սերը հետզհետե աճեցին և ուռճացան: Այսօր Մենք անսահմանորեն մխիթարված ենք՝ տեսնելով, որ ամբողջ հայ ժողովուրդը թե՛ ի Հայաստան և թե՛ արտասահման, սփյուռքի բոլոր ճանապարհների վրա, մեկ սիրտ, մեկ հոգի, իր հայացքն ուղղել է դեպի հավիտենական Մայր Աթոռ ս. Էջմիածին, իբրև գերագույն սրբություն, գերագույն օրհնություն, գերագույն մխիթարանք և գերագույն փրկության ճանապարհ:

Մեր ժողովուրդն իր առողջ բնազդով և հոգևոր, ազգային գիտակցությամբ Ամենայն Հայոց Հայրապետին՝ Վազգեն Ա-ին նայում է ոչ թե իբրև Վազգեն Ա-ի (դա երկրորդական է բոլորովին), այլ իբրև Լուսավորչի Աթոռի Գահակալի: Մենք Մեր տկար ուժերով պարզապես ծառայում ենք այս Աթոռին, Լուսավորչի Աթոռին, Հայոց Ընդհանրական Հայրապետության միակ և Գերագույն Աթոռին, որով երաշխավորված է ու ապահովված հայ ժողովրդի քրիստոնեական հավատքը, Հայաստանյայց եկեղեցու մեկությունը, նրա նվիրապետության միությունը և հայ ժողովրդի ազգային միասնականությունը: Սա է մեր կյանքի գերագույն ճշմարտությունը դարերից ի վեր՝ երեկ, այսօր և հավիտյան, ճշմարտություն, որի շուրջ սակարկություն կարելի չէ անել, ճշմարտություն, որ վեր է մեզանից և մեկ անգամ ընդմիշտ դրոշմված պատմության հուլովություն:

Ահա Մենք այսպես ենք ճանաչում հայ ժողովրդին 17 տարիներից ի վեր:

Մեր գործունեության շրջանում Մենք վայելեցինք նաև անվերապահ բարյացակամությունը և բարոյական օժանդակությունը մեր պետական իշխանությանց: Պարզ պետք է լինի բոլորիս, կարծում ենք, որ եթե չլիներ այդ բարյացակամ վերաբերմունքը, Հայոց Հայրապետը չպիտի կարողանար իրագործել Իր ծրագրերը: Հետևաբար, Մենք նաև ա՛յս իրողության համար փնտք ենք տալիս Աստուծո Ամենակալին և Մենք Մեզ համարում ենք երջանիկ Հայրապետ, որին վիճակվեց գործել այսպիսի նպաստավոր հայրենական պայմանների մեջ՝ ձեռք-ձեռքի տված մեր ժողովրդի և Հայաստանի հայրենաշեն ղեկավարների հետ:

Այս սուրբ պահին Մենք չենք կարող Մեր աղոթքը չբարձրացնել դեպի երկինք՝ մաղթելով մեր ժողովրդին, հայաստանցի մեր ժողովրդին՝ նորանոր հաջողություններ իր կյանքի ճանապարհի վրա, նորանոր նվաճումներ և ստեղծագործ աշխատանքի արգասիքներ:

Աղոթում ենք հատկապես մեր մայր երկրի, մեր թանկագին, մեր աչքի լույս Մայր Հայաստանի անասանության, խաղաղության, անվտանգության և ապահով, երջանիկ առաջընթացի համար, որպեսզի նա նաև հետ այսու

շարունակի բարձրանալ քայլ առ քայլ, նոր նվաճումների ճանապարհով դեպի այն բարձունքները, որոնց ձգտում է հայ ժողովրդի հոգին և գիտակցությունը:

Այս հանդիսավոր պահին Մենք երջանիկ ենք մահ իբրև հայրապետ և իբրև եկեղեցի, որ ապրում ենք և գործում մի դարաշրջանում, երբ վերածնված հայոց հայրենիքը Մեզ շրջապատում է ծաղկած վիճակում, երգով-ծիծաղով և անմախքնության վերելքով: Հայոց Հայրապետը ինչպե՞ս չուրախանա, ինչպե՞ս չներշնչվի և ինչպե՞ս չգործադրի հոգով և մտքով այս երջանիկ իրադրության մեջ, իրադրություն, որից մեր ազգը զրկված է եղել դարեր շարունակ: Ահա թե ինչու մենք բոլորս համակված ենք խանդավառ զգացումներով և կրկնապատկված ուժերով աշխատում ենք մեր պարտքը կատարել Աստուծո, եկեղեցու, մեր ժողովրդի և մեր պատմության առջև: Թող Աստված օրհնի Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածինը և համայն մեր ժողովուրդը, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Թող Աստված օրհնի վերածնված մայր հայրենիքը մեր՝ ամենայն հայոց հավիտենական Հայաստանը:

Այսօր Մեր գահակալության 17-րդ տարեդարձին մեր հարևան եղբայրական Վրաստանից Մայր Աթոռ է ժամանել Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Դավիթ Ե-ը՝ Մեր սիրեցյալ եղբայրը՝ ի գլուխ վրացական եկեղեցու բարձրաստիճան մի պատվիրակության:

Մենք գրկարաց ընդունեցինք Նորին Սրբություն Դավիթ Ե-ին, եղբայրաբար ողջագործեցինք և կրկին անգամ փառք տվինք Աստծուն, որ խաղաղ և երջանիկ պայմանների մեջ մեր երկու եկեղեցիները, մեր երկու ժողովուրդները՝ վրաց սքանչելի ժողովուրդը և Հայաստանի ժողովուրդը, ձեռք-ձեռքի տված միութենական բոլոր եղբայրական ժողովուրդների հետ, կերտում են բոլորիս համար առավել պայծառ և երջանիկ ապագա: Թե՛ վրաց ժողովուրդը և վրացական քույր եկեղեցին, թե՛ հայերն ու Հայաստանյայց եկեղեցին իրենց ճշմարիտ ապահովության և խաղաղության գրավականն են տեսնում այս նոր իրադրության մեջ: Մենք աղոթում ենք, որ այդ իրադրությունը հետոքհետո ավելի հաստատուն և անսասան դառնա՝ հերջանկություն մեր ժողովուրդների և հիրագործումն մեր ապագա բոլոր արդար իղձերի:

Ահա այս զգացումներով և էկումենիկ ոգով կրկին անգամ բարի գալուստ ենք մաղթում Նորին Սրբություն Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսին՝ ցանկանալով Նրան երկար, քաջառողջ կյանք և երջանիկ հովվապետություն: Մեր երկու եկեղեցիների և ժողովուրդների բարեկամությունը ունի բազում տարիների պատմություն, դա բարեկամության պատմություն է, եղբայրության պատմություն է, միասնական պայքարի, աշխատանքի և առաջադիմության պատմություն է: Անցյալի փոթորկալից շրջաններում մեր երկու ժողովուրդները շատ հաճախ զեն ի ձեռին, կողք-կողքի կովել են մույն ահարկու և բարբարոս թշնամիների դեմ: Եվ նրանք վերջին հիսուն տարիների ընթացքում էլի կողք-կողքի հասել են խաղաղ և ապահով կյանքի, ծաղկումի և ազգային վերածնության ափին:

Թող Աստված օրհնի մեր ժողովուրդների դարավոր բարեկամությունը: Թող Աստված օրհնի մեր երկու եկեղեցիներին՝ վրացական օրթոդոքս սուրբ եկեղեցու և Հայաստանյայց առաքելական եկեղեցու անքակտելի եղբայրությունը այժմ և հավիտյան, ամեն:

Հավարտ սուրբ պատարագի երկու Հովվապետները հանդիսավորությամբ առաջնորդվեցին Վեհարանի գահաարան:

**ԵՆՈՐՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ
ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ 17-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ**

Եկեղեցական թափորը կանգ առավ Նոր Վեհարանի գահասրահում: Հայոց Հայրապետը բազմեց իր գահի վրա, իսկ Նորին Սրբություն **Դավիթ Ե կաթողիկոսը**՝ իր համար դրված մասնավոր հայրապետական գահի վրա:

Գահասրահում ներկա էին վրաց քույր եկեղեցու պատվիրակության անդամները, տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ներքին թեմերի թեմական-եկեղեցական խորհուրդների անդամները, մայրավանքի պաշտոնեությունը, մտավորականներ և ուխտավորների մի հոծ բազմություն մայր հայրենիքից և արտասահմանից:

Վեհարանի գահասրահում էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գաուպարյանը:

Հանուն Մայր Աթոռի, Գերագույն հոգևոր խորհրդի և միաբանության, Հայոց Հայրապետի գահակալության 17-րդ տարեդարձը շնորհավորեց Մայր տաճարի լուսարարապետ տ. **Հուսիկ եպս. Սանթրուքյանը**՝ վեր հանելով գահակալության 17 տարիների ընթացքում Հայոց Հայրապետի կատարած հոգևոր, եկեղեցական, մշակութային, շինարարական և ազգային-հայրենասիրական գործունեությունը:

Այնուհետև Հայոց Հայրապետի գահակալության 17-րդ տարեդարձի առիթով հանդես եկավ հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Համայն Վրաստանի Նորին Սրբություն **Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը** ողջույնի և շնորհակալության հետևյալ գեղեցիկ խոսքով.

**ՎՐԱՅ ԴԱՎԻԹ Ե ՊԱՏՐԻԱՐԶ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ**

«Ձերոյ Սրբություն,

Մենք ուրախության խոր զգացումով ժամանեցինք Էջմիածին: Մեր գալուստը զուգադիպեց հայ եկեղեցու մեծ տոնակատարությանը՝ հայ հնադարյան առաքելական եկեղեցու գահին բազմելու Ձեր 17-ամյա հոբելյանի օրվան:

Վրացական սուրբ և ուղղափառ եկեղեցին ամբողջ հոգով և սրտով ջերմորեն, առավել հաճելի զգացումով ողջունում է Ձեզ և աղոթելով ցանկանում է Ձերոյ Սրբությանը երկար և բարեբաատիկ տարիների կյանք:

Այսօր, երբ հայ եկեղեցու ողջ ժողովուրդը, ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, տոնում է Ձեր պատրիարքության 17-ամյակը, վրաց ուղղափառ եկեղեցին, Հայաստանյայց քույր եկեղեցու հետ, վերաառաքում է գոհաբանական աղոթքներ մեր Հովվապետին՝ Տեր Հիսուս Քրիստոսին, այն բոլոր շնորհների համար, որ նա հեղել է Ձեր վրա Ձեր հայրապետության ընթացքում:

Հայ և վրաց եկեղեցիների պատմությունը՝ նրանց ժողովուրդների պայքարի պատմությունն է նվաճողների դեմ: Այստեղով հրով և սրով անցել են արաբներ, մոնղոլներ, խորեզմացիներ, պարսիկներ և օսմանցիներ: Բայց չնայած թշնամիների մշտական ներխուժումներին, հայ և վրաց ժողովուրդները չկորցրեցին միմյանց կապող իրենց դարավոր բարեկամությունը:

Այս երկու ժողովուրդների կրոնական անցյալը, բազմադարյան պատմու-

թյունն ու նրանց ճակատագիրը հավիտյան բարեկամացրեց երկու քրիստոնյա եկեղեցիներն ու ժողովուրդները:

Նրանք ձեռք-ձեռքի տված դիմագրավեցին ընդհանուր թշնամուն և իրենց քրիստոնեական մշակույթը դարերի միջով խնամքով հասցրեցին մինչև մեր օրերը:

Մեր եկեղեցիների այս բարեկամությունը, մանավանդ այսօր, միանգամայն ակնհայտ է: Այս տարի Ձերո՛ր Սրբությունը մեզ հետ շփում ունեցավ երկու անգամ: Ձեր առաջին այցելության նպատակն էր հայտնել Ձեր խոր ցավակցությունը Բողաշում վախճանված հանգուցյալ, երջանկահիշատակ Տ. Եփրեմ Բ. Համայն Վրաստանի Սրբազնագույն և երանելի կաթողիկոս-Պատրիարքի մահվան առիթով:

Ձեր երկրորդ այցելությունը առնչվում էր Մեր ուրախության հետ, երբ վրացական սուրբ և ուղղափառ եկեղեցին, ի դեմս Մեզ, ունեցավ մի նոր առաջնորդ: Դուք, Ձերո՛ր Սրբություն, ժամանեցիք այդ տոնակատարություններին և մեզ հետ բաժանեցիք մեր ուրախությունը, և Ձեր ներկայությամբ ամրապնդեցիք եղբայրական բարեկամությունը մեր երկու քույր եկեղեցիների և մեր երկու հավատացյալ ժողովուրդների միջև:

Մեր հայրենիքը պատրաստվում է դիմավորելու ՍՍՀՄ-ի կազմավորման 50-ամյակը: Մեզ մոտ բոլոր ազգերի մարդիկ ապրում են իրավահավասար, մեզ մոտ մեկ ազգի կողմից մյուսի վրա ոչ մի ճնշում չկա: Այստեղ լիակատար փոխադարձ վստահություն է և եղբայրական միության գիտակցություն: Այստեղ կյանքի և գործունեության ազատություն է տրված բոլոր եկեղեցիներին:

Իր հիմնադրության հենց սկզբից Սովետական Միությունը ամբողջ աշխարհում եղավ խաղաղության և արդարության հուշակոթը:

Հաճելի է մեզ խոստովանել, Ձերո՛ր Սրբություն, որ Դուք ևս հանդիսացաք աշխարհի խաղաղության սուրբ գործի ջատագովը, և Ձեր ջանքերը՝ աշխարհի խաղաղության համար, տոգորված են այն համոզումով, որ Ձեր խաղաղարար ձեռնարկները, Աստուծո՛ւ օգնականությամբ, կտան իրենց պտուղները խաղաղության և արդարության համար մղվող պայքարով:

Հայ եկեղեցին 17 տարիների ընթացքում, ղեկավարվելով Ձերո՛ր Սրբության կողմից, մեծապես ծառայել է և շարունակում է ծառայել բոլոր քրիստոնյա ժողովուրդների մերձեցմանը՝ հանուն խաղաղության պահպանման:

Վրացական ուղղափառ եկեղեցին, ինչպես Մենք վկայել ենք այս տարվա սեպտեմբերի 10-ին Ձերո՛ր Սրբությանն ուղղված Մեր նամակում, բարձր է գնահատում հայ հնադարյան եկեղեցու հետ իր սերտ հարաբերությունները, ինչպես նաև հայ և վրացի հավատացյալ ժողովուրդների միջև գոյություն ունեցող հնագույն բարեկամական կապերը:

Այսօր Մենք ևս, հիմնավորց Հջմիածնի կամարների տակ, վկայում ենք և մեկ անգամ ևս ամրացնում եղբայրական բարեկամությունը հայ և վրաց եկեղեցիների միջև: Թող Մեր համատեղ աղոթքը քերի բարօրություն և երջանկություն մեր եկեղեցիների ժողովուրդներին և ամրացնի եղբայրությունն ու խաղաղությունը համայն աշխարհի ժողովուրդների միջև:

Այնուհետև շնորհավորության ջերմ խոսքով հանդես եկավ ՀՍՄՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Սարգիս Գասպարյանը:

ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ

«Ձերդ Սրբություն վազգեն Ա,

Գերաշնորհ հայրեր, թանկագին հյուրեր,

Ինձ վրա այսօր հանելի պարտականություն է դրված Հայաստանի կառավարության, հայ եկեղեցու գործերի խորհրդի բոլոր անդամների և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորել Ձեր գահակալության 17-րդ տարեդարձը:

Եթե մի հետադարձ հայացք նետենք դեպի 1955-ական թվականների սկիզբը, երբ Դուք բազմեցիք ս. Էջմիածնի մախամեծար Աթոռին, կտեսնենք, որ Հայաստանում և սփյուռքում ապրող մեր ժողովրդի համար դա շատ կողմերով պատասխանատու, հետաքրքիր և հարուստ իրադարձություններով լի ժամանակաշրջան էր: Հետպատերազմյան այն ժամանակաշրջանն էր, երբ արդեն տուն էին վերադարձել հայ զինվորները, հայ գեներալներն ու սպաները, և հայ ժողովուրդը, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, լծվել էր շինարար աշխատանքի, որպեսզի խաղաղ կյանքի պայմաններում շարունակի կառուցել և ծաղկեցնել իր երկիրը:

Դժվար է այստեղ մեկ առ մեկ թվարկել այն բոլորը, ինչ կատարվեց ետպատերազմյան շրջանում: Հայ ժողովրդի մասսայական հայրենադարձությունը, որը մի փառավոր էջ է մեր ժողովրդի պատմության մեջ, այն շինարարությունը, որ անմախճթաց չափերով ծավալվեց Հայաստանում և այժմ շարունակվում է, մեր ազգային, մշակութային կյանքի անմախճթաց զարթոնքը, սփյուռքահայ կյանքի զարթոնքը, սփյուռք-հայրենիք կապերի ընդլայնումը—այս բոլորը բնորոշ եղան ետպատերազմյան ժամանակաշրջանի համար: Մեզ քաջ հայտնի է, որ այս ամբողջ ժամանակաշրջանում Դուք միշտ եղել եք իրադարձությունների կենտրոնում և Ձեր անձնական եռանդն ու կոթովն եք ներդրել այս ժամանակաշրջանում ծավալված բոլոր կարևոր իրադարձությունների մեջ: Դուք ոչ միայն ուրախացել եք հայ վերածնված ժողովրդի վերելքի, հայ պետականության ծաղկման հետ կապված յուրաքանչյուր առիթով, այլև մի շարք դեպքերում անձնապես մասնակից եք եղել այդ զարթոնքի ու այդ վերածնության դեպքերին ու իրադարձություններին:

Ես կուզենայի մի առանձին ուժով ընդգծել, որ այս անցած տարիների ընթացքում մեր կառավարության և մեր ժողովրդի կողմից մեծ աշխատանք կատարվեց արտաշխարհի հետ հայրենիքի կապերը ընդլայնելու ատարելագրում: Չկա այլևս գաղթականների, կոտորածի, սովի և համաճարակների Հայաստանը, կա նոր Հայաստանը, հաղթական Հայաստանը, որն իր մշակութային արժեքները շոալորեն տարածում է իր ժողովրդի համար ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում: Ահա ազգային և մշակութային կյանքի նոր բուռն զարթոնքի այս պայմաններում Դուք ազգային-եկեղեցական Ձեր առաքելությանը մեծ աշխատանք կատարեցիք անցած 17 տարիների ընթացքում, Ձեր իմն ուղևորությունների ընթացքում, որպեսզի այն ոսկե կամուրջը, որ սփյուռքը կապում է Հայաստանի հետ, դառնա ավելի ամուր ու անխտրտակելի:

Ես կուզենայի ընդգծել նաև, որ այս ժամանակաշրջանում ամբողջ հայ ժողովուրդը, որ գիտե խաղաղության գինը, որ այնքան տառապել էր պատերազմների արհալիրքներից, մեծ եռանդով պայքարեց ամբողջ աշխարհի խաղաղության համար, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին: Համաշխարհային խաղաղության համար ծավալված այդ պայքարում Դուք Ձեր հեղինակությամբ, որպես Հայաստանում և սփյուռքում ապրող մեր ժողովրդի քանկան ցանկությունների արտահայտիչը, Ձեր հեղինակավոր

խոսքը լսելի դարձրիք, որպեսզի աշխարհի խաղաղությունը լինի ավելի կայուն, որպեսզի այն շինարարությունը, այն խաղաղ աշխատանքը, որ մենք տանում ենք Հայաստանում, լինի ավելի բեղմնավոր, ավելի արդյունավետ, լինի հաստատուն և հավիտյան:

Ես կուզենայի մի առանձին ուժով ընդգծել, որ Ձեր գահակալության բոլոր տարիների ընթացքում և բոլոր առիթներով, եկեղեցական քեմերից և այլ ամբիոններից, Հայաստանում կամ այլուր, Դուք անդադրում կերպով պայքարեցիք հանուն սովետական ժողովուրդների բարեկամության, որը մեր բոլորիս ամենամեծ իդեալներից մեկն է: Ահա թե ինչու Սովետական Միության բոլոր ժողովուրդները մեծ ոգևորությամբ պատրաստվում են նշելու Սովետական Միության կազմավորման 50-ամյակը:

Այսօր, երբ նշում ենք Ձեր գահակալության 17-րդ տարեդարձը, ուրախ ենք, որ Դուք լի էք եռանդով, քաջատուջ և գտնվում եք Ձեր մտավոր ու ֆիզիկական ուժերի ամենածաղկուն շրջանում: Մենք համոզված ենք, որ Ձեր գործունեության առաջիկա տարիները կլինեն ավելի արգասավոր, ազգային-եկեղեցական կյանքում կհասնենք նոր հաջողությունների:

Թույլ տվեք, Ձերդ Սրբություն, շնորհավորել Ձեզ Ձեր գահակալության 17-րդ տարեդարձի առթիվ և սրտանց Ձեզ կամենալ քաջատուջություն, լավ տրամադրություն, Ձեր բոլոր ցանկությունների իրականացում թե՛ Հայաստանում, թե՛ արտաշխարհում, կամենալ գործունեության բազում տարիներ, հուրախություն հայ ժողովրդի:

Այնուհետև պարոն Ս. Գասպարյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի և նրան առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի ու անձամբ իր անունից, ջերմորեն ողջունեց և բարի գալուստ մաղթեց Համայն Վրաստանի Նորին Սրբություն Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսին, Նրան ողբեկցող բարձրաստիճան հոգևորականների պատվիրակությանը՝ շեշտելով երկու հարևան ժողովուրդների, երկրների և եկեղեցիների դարավոր եղբայրական կապն ու հարաբերությունները անցյալում, ինչպես նաև ազգային-ազատագրական միացյալ պայքարի հերոսական շրջաններում, մանավանդ վերջին հիսնամյակին, երբ Սովետական իշխանության հաստատման պայմաններում երկու հարևան հանրապետությունները միատեղ կերտում են իրենց նոր կյանքը և պայծառ ապագան եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում:

Հայոց Հայրապետի գահակալության 17-րդ տարեդարձի այս հանդիսություններին ջերմ ու սրտագին հնչեց նաև ԱՄՆ-ի հայոց առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի հետևյալ որդիական խոսքը հանուն իր թեմի և ժողովրդի:

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ

«Վեհափառ Հայրապետ,

Ծաղկում է Վեհիդ հովվապետական գավազանը:

Եվ անոնք որոնք տեղյակ են Ձերդ Սրբության կյանքի ուղու գիծին, հոգիի խանդավառության, տեսական ծրագրումներուն, մեր հայրերու հավատքին և հայրենի երկրին ու պատմության հանդեպ հավատարմության, անոնք նույն ժամանակ ծանոթ են նաև Վեհիդ հոգիի խոռվքներուն, դիմակալած խոչընդոտներուն, մեր եկեղեցիին ու ազգին միության ու բարգավաճումին սիրույն կրած հոգեմաշումներուն:

կյանքի մոռաց սրահները սակայն, չեն հաջողվում Ձեր հոգիին ոսկի սյունը խորտակել: Դիշտ այնպես ինչպես կործանիչ ձեռքերու վայրագությունը, մեր ժողովուրդի պատմության մեջ, չէ հաջողվում խորտակել մեր ազգի զավակներուն ստեղծագործ հոգին, ավերածներու ընդմեջեն, կոթողական ավերակներու դիմաց, և «խաչքարերու սուրբ աշխարհ» դարձած՝ «բարի հայրենիք, հույսի ու լույսի հայրենիք» Հայաստան աշխարհի մեջ:

Ահա թե ինչու Ամենայն Հայոց Հայրապետի անձը կենդանի և տեսագույց խորհրդանշան է հոգեհանդիս տոկունության և հարաշարժ գործունեության, ոչ միայն ամենայն հայոց հայրենիքի անկողոպտելի հողին մեջ ծլարձակված, այլ նաև ի սփյուռս աշխարհի ցրված Իր զավակներուն հոգիներուն մեջ ծաղկած:

Ձերդ Սրբության գահակալության տասնևյոթ տարիները արդեն իսկ մաս կկազմեն քսաներորդ դարու հայոց պատմության: Տասնևյոթ տարիները, նման տասնևյոթ տարբեր նվագարաններու և լարերու, իրենց համանվագը կարձագանքեն սրտերուն ու մտքերուն մեջ ինչպես հայ ազգի Ձեր հարազատ զավակներուն, նույնպես բոլոր անոնց, որոնք Ձեր անձին ներկայության գտնված են, երկրե երկիր Ձեր շնորհաբեր այցելությանց ընթացքին:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, հայրենի հողերեն տարագիր Ձեր զավակներուն, սփյուռքի տարածքին անող բայց միշտ սուրբ Էջմիածնի և Արարատի «լույս ճակատին» դարձող Ձեր հարազատներուն անունով մատթել, որ հարյուրի հասնի թիվը նվագարաններուն և լարերուն որոնց համանվագը դառնա արձագանք հայ շինարար ու ստեղծագործ հոգիին, աշխարհի խաղաղության մեջ, ժողովուրդներու քաղաքակրթության շարքին և մարդկության պատմության ճանապարհներուն վրա:

Օրհնեցեք մեզ, Վեհափառ Տեր, և Ձերդ Սրբության հովվապետական գավազանը թող միշտ ծաղկյալ մնա:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Հարգարժան պարոն Գասպարյան, ներկայացուցիչը մեր հայրենի կառավարության,

Շատ սիրելի ներկաներ,

Շատ բնական է, որ այսօր Հայոց Հայրապետը լինի զգացված, հուզված և խորապես մխիթարված այն բոլոր քաղցր խոսքերի համար, որոնք ուղղվեցին Իրեն, Նրա հայրապետական գործունեության 17-րդ տարեդարձի առիթով:

Մենք բնականաբար չենք անդրադառնալու 17 տարիների Մեր աշխատանքին: Այժմ մեզ մնում է կրկին անգամ գոհություն մատուցել Աստուծո Ամենակալին այն բոլոր պարգևների համար, որ ընծայվում են Մեր համեստ անձին: Մենք մասնավոր շնորհակալություն ենք ուզում հայտնել մի անգամ ևս Մեր սիրեցյալ եղբորը՝ Նորին Սրբազնագույն կաթողիկոս Դավիթ Ե Համայն Վրաստանի Հայրապետին, որ մեր այս հանդիսություններին բերեց Իր քաղցր խոսքը, Իր բարի ժպիտը, Իր հայրական օրհնությունը: Մաղթում ենք Ձեզ երկար, քաջառողջ տարիներ, որպեսզի եթե ոչ ամեն տարի, բայց հաճախ լինեք մեզ մոտ և Ձեր բարի հորդորներով և օրհնությամբ մխիթարեք մեր ժողովուրդը:

Մենք կուզեինք նաև Մեր խորունկ շնորհակալությունը հայտնել մեծա-

հարգ տիար Սարգիս Գասպարյանին, որը հանում մեր հայրենի կառավարության զգալուն, անկեղծ և սրտաբոխ խոսքեր արտասանեց: Մենք ճանաչում ենք Նրան բավական տարիներից ի վեր: Մեր գահակալության տարիների մեծագույն մասը Մենք միասին ենք աշխատել, այն իմաստով, որ պրն. Գասպարյանը, իբրև հայրենի կառավարության ներկայացուցիչ, միշտ ամենաբարի ցանկություններով ընդառաջել է Մեր բոլոր առաջադրանքներին և ծրագրերին և բարոյապես օգնել է Մեզ, որպեսզի նրանք հնարավոր դառնան մեր երկրի պայմանների մեջ:

Գոհունակության խոսքը նաև մեր եկեղեցու բարձաստիճան հոգևորականներին, Մեր գործակից եղբայրներին, գերաշնորհ Թորգոմ արքեպիսկոպոսին՝ Միացյալ Նահանգաց մեր թեմի առաջնորդին և Մայր Աթոռի լուսարարապետ Հուսիկ եպիսկոպոսին, որ շնորհավորեց Մեզ հանուն Մայր Աթոռի միաբանության և Գերագույն հոգևոր խորհրդի:

Սիրելի ներկաներ, մաղթում ենք ձեզ բոլորիդ աստվածային օրհնություն և Մեր սրտից բխած ամեն բարի ցանկություն: Թող Աստված ամսասան և միշտ ծաղկյալ պահի մեր Հայաստանյայց ա. եկեղեցին, Մայր Աթոռ ա. Էջմիածինը և համայն վերածնված մեր ժողովուրդը, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Ողջ լնրուք զորացյալ սուրբ Հոգով և հավետ օրհնյալ ի Տեսունե և ի մենջ: Ամեն:

Հայոց Հայրապետի գահակալության 17-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունն ավարտվեց գահասրահում Նորին Սրբության «Պահպանիչ»-ով և ներկաների աջահամբույրով:

Այս ուրախ առիթով երկու Հայրապետները փոխանակեցին հուշանվերներ:

ՊԱԾՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Վեհափառ Հայրապետի գահակալության 17-րդ տարեդարձի ուրախ առիթով Վեհարանի սեղանատանը ժամը 15-ին տրվեց պաշտոնական մաշկերույթ:

Ընդունելությանը ներկա էին Համայն Վրաց Տ. Դավիթ Ե կաթողիկոսը, տ. Իլիա և Զինովի միտրոպոլիտները, Գալուս եպիսկոպոսը, տ. Թորգոմ և տ. Կոմիտաս արքեպիսկոպոսները, տ. Հուսիկ եպիսկոպոսը, տ. Արիս Ծ. վարդապետը, տ. Մուշեղ, տ. Գևորգ, տ. Մեսրոպ, տ. Աղան վարդապետները, Գերագույն հոգևոր խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Արարսույան, վրահայոց և Բաքվի թեմերի թեմական խորհրդի անդամները, հյուրեր Լոնդոնից, ԱՄՆ-ից, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարությանը, հոգևոր ճեմարանի դասախոսներ, մայրավանքի ղեկավար պաշտոններությունը և այլ հրավիրյալներ:

Ծաշկերույթին ներկա էր նաև ՀՍՍՀ Միմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Սուրեն Հովհաննիսյանը:

Սեղանը օրհնում է Հայոց Հայրապետը: Այնուհետև խանդավառ մթնոլորտում Հայոց Հայրապետի գահակալության տարեդարձը շնորհավորեցին և սրտագին բարեմաղթություններ կարդացին Տ. Դավիթ Ե կաթողիկոսը, պարոն Ս. Գասպարյանը, տ. Կոմիտաս և տ. Հուսիկ արքագանները և ուրիշներ:

Ծաշկերույթի ժամանակ բաժակներ առաջարկվեցին երկու Հայրապետնե-



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ Տ. ԴԱՎԻԹ Ե ՎՐԱՅ ՊԱՏՐԻԱՐԺ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ՆՎԻՐՈՒՄ Է ՈՍԿԵԶՈՒ ԱՐԾԱԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉ

յի կենաց արևշատության և բարօր հովվապետության, հայ և վրաց եկեղեցիների պայծառության և անասանության, ինչպես նաև հայ և վրաց ժողովուրդների, Հայաստանի ու Վրաստանի հայրապետությունների է՛լ ավելի պայծառ ապագայի կենացը:

Այս ուրախ առիթով թեմերի կողմից գեղեցիկ հուշանվերներ մատուցվեցին Հայոց Հայրապետին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հոկտեմբերի 2-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, Երևանում, Կառավարական տանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ մեծահարգ տիար **Բաղալ Մուրադյանը** ընդունեց այցելությունը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Համայն Վրաստանի Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսի:

Երկու Հայրապետներին ողեկցում էին Իրենց շքախմբի անդամները:

Երկու Հայրապետների և Մինիստրների սովետի պարոն նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, փոխանակվեցին ողջույնի և բարիգալստյան սրտագին խոսքեր, բարեկամական մթնոլորտում:

Զրույցին ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. **Ս. Գասպարյանը**:

ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոկտեմբերի 2-ին, նույն օրը, ժամը 13-ին, երկու Հայրապետները Իրենց շքախմբերով ուխտի գնացին ս. Գեղարդի վանք:

Հայոց պատմական վանքի մեծ դարպասի առաջ երկու Հովվապետներին և Նրանց ողեկցող անձանց աղ ու հացով, խաչով ու խնկով դիմավորեցին վանքի միաբանությունն ու պաշտոնեությունը:

Այնուհետև երկու Հայրապետները առաջնորդվեցին եկեղեցի՝ աղոթքի, որից հետո հարգարժան հյուրերին մանրամասն տեղեկություններ տրվեց ս. Գեղարդի վանքի մասին, որպես հայ հոգևոր մշակույթի փառավոր օջախներից մեկի:

Երկու Հայրապետները Իրենց շքախմբերով հրաժեշտ տվեցին Գեղարդյա պատմական վանքին և վերադարձան Երևան:

Ժամը 16-ին «Անի» հյուրանոցի փոքր դահլիճում, ի պատիվ քույր եկեղեցու Հովվապետի ու Նրա շքախմբի անդամների, տրվեց հրաժեշտի՝ ճաշ-կերույթ, որին մասնակցեց նաև Հայոց Հայրապետը Իր շքախմբի անդամներով: Ծաշկերույթի ժամանակ փոխանակվեցին հրաժեշտի և ողջերթի սրտառու ճառեր:

ՀՐԱԺԵԾՏ ԵՎ ՄԵԿՆՈՒՄ

Հոկտեմբերի 8-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, հարգարժան հյուրերը այցելեցին Օջական, ս. Մեսրոպ Մաշտոցի շիրմին՝ Իրենց հարգանքի տուրքը մատուցելու Մեծ Վարդապետի անմահ հիշատակին:

Ժամը 12-ին հյուրերը վերադարձան Մայր Աթոռ: Հայոց Հայրապետը և Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը Վեհաբանում պաշտոնական առանձին

տեսակցություն ունեցան հայ և վրաց եկեղեցիները հետաքրքրող մի շարք կարևոր հարցերի շուրջ:

Այնուհետև տեղի ունեցավ վերջին հանդիպումը և սիրավիր գրույցը Հայոց Հայրապետի և Նորին Սրբություն Դավիթ Ե կաթողիկոսի ու Նրա շքախմբի անդամների միջև:

Ժամը 14-ին Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե-ը և Նրա շքախմբի անդամները հրաժեշտ ստան Մայր Աթոռից լավագույն տպավորություններով և մեկնեցին Երևանի օդանավակայան:

Երևանի օդանավակայանում Մայր Աթոռի բարձրաստիճան հյուրերին ճանապարհեց Հայոց Հայրապետը՝ շրջապատված միաբանության անդամներով և պաշտոնեությամբ:

Վրաց եկեղեցու պատվիրակությանը ճանապարհեց նաև ՀԱՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ս. Գառապարյանը:

Վրաց ուղղափառ և քույր եկեղեցու Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսի սույն բարեկամական այցելությունը Մայր Աթոռ սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 3-ը հանդիսացավ երջանիկ պատմական մի առիթ ևս՝ առավել ամրապնդելու հայ և վրաց երկու եկեղեցիների բազմադարյան բարեկամությունը Ավետարանի եղբայրության ու միության պատգամով և էկումենիկ ոգով:

